

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ՄՆ ՄՕԻԳ-ԲԸԱԸՁԲ-15/48-2»**

ք. Երևան

«01» հունվարի 2015 թ. 3

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ե. Խերանյանի, որը գործում է ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոտայքնախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Նազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն կարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 2 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Վերին Դվին հնավայրի ճեմոտիների, գլխավոր հատակագծի, մուտքային հատվածների կազմակերպման և հուշարձանապատկան բեկորների ցուցադրության և ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի Սր.Հովհաննես եկեղեցու վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Աշխատանքի տեխնիկական բնութագրին և N 2 Հավելվածով սահմանված Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և (առկա ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելից աշխատանքների համար) կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև՝ **2015թ. Նոյեմբերի 30-ը**:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 3):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի

կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զենել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումների կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձանք, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կաշնարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ո՞րքամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 5) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 (երեք) օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակահակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ փարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել

կապիտալ շինարարության համար կապարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փոփոխելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է՝ վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **52 337 142 (հիսուներկու միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար մեկ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

8-րդ չափաբաժին՝ 39 430 314 (երեսունինը միլիոն չորս հարյուր երեսուն հազար երեք հարյուր տասնչորս) ՀՀ դրամ:

12-րդ չափաբաժին՝ 12 906 828 (տասներկու միլիոն ինը հարյուր վեց հազար ութ հարյուր քսանութ) ՀՀ դրամ:

5.1.1 **8-րդ չափաբաժնի** համար՝ սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում և 1.2 կետին համապատասխան Կապալառուի կողմից՝ իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է **9 563 113 (ինը միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր տասներեք) ՀՀ դրամ,** (այսուհետև՝ տվյալ չափաբաժնի մասով պայմանագրային գումար):

8-րդ չափաբաժնի մասով պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնա՝ ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 4 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 քանկային օրվա՝ ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 4 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ)՝ տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՆՁՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յոտաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5

8.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության¹ դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործունիների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ քաջառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ

ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.6 Սույն պայմանագիրը կնքվում ընդհանուր՝ **52 337 142 (հիսուներկու միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար մեկ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ արժեքով**, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ,
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Կառավարական շենք N 3,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՔՎՀՀ 02597322,

«Ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսական վարչությունում



Ե. Խերանյան

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Արուսյան, Բարեկամության 2,
հեռ.՝ (0222) 2-54-44,

Էլ. փոստ՝ info@koproekt@rambler.ru



Հեռ.՝ 503627,

Հեռ.՝ 01476

«Արուսյան» մասնաճյուղ:

Լազարյան

Չափաբաժին N 8

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

<< Արարատի մարզի Վերին Դվին հնավայրի ճեմուղիների, գլխավոր հատակագծի, մուտքային հատվածների կազմակերպման և հուշարձանապատկան թեկոքների ցուցադրության

1	<p>Գնման առարկայի (հուշարձանի) քննադատումը և առկա վիճակի նկարագրությունը</p>	<p>Միջնադարյան Հայաստանի Դվին մայրաքաղաքի ավերակները գտնվում են Վերին Դվին, Հնաբերդ, Վերին Արտաշատ, Նորաշեն, Այգեատան գյուղերի տարածքներում, երևանից մոտ 30 կմ հարավ: Հիմնադրվել է IV դ. 30-ական թվականներին, Տրդատ III-ի որդի Խոսրով Բ Կոտակի օրոք: 330-331 թթ. Խոսրով Բ թագավորը հայոց արքունիքը Արտաշատից տեղափոխել է հյուսիս, Դվին կոչվող բլրի վրա՝ Արփա գետի հունի փոփոխման, Արտաշատ մայրաքաղաքի կլիմայական պայմանների փառթարացման պատճառով: 470 թ. Գյուտ Ա Արա- հեզացի կաթողիկոսի օրոք Վաղարշապատից Դվին է տեղափոխվել նաև կաթողիկոսարանը: VIII-IX դդ. Դվինը եղել է արաբ զավթիչների ստեղծած «Արմինիա» վարչական միավորման կենտրոն: Դվինը նոր վերելք է ապրել IX-XI դդ. Բագրատունիների թագավորության օրոք: XI դ. երկրորդ կեսին քունազավթվել է սելջուկ թուրքերի կողմից: Ազատագրվել է XIII դ. Ջաջարյանների իշխանության օրոք: Դվինը լրիվ ավերվել է 1225 թ. Ջալալ էդ Դինի և 1236 թ. մոնղոլների արշավանքների հետևանքով: XV-XVI դդ. նրա տարածքում առաջացել են մի քանի գյուղական բնակավայրեր: Աշխատանքները նախատեսվում է սկսել 2015 թվականին:</p>
2	<p>Ձեռքբերվող աշխատանքների համառոտ նկարագրությունը</p>	<p>Նախատեսվում է իրականացնել միջնաբերդի մուտքի հարթ երեսապատի քանդման-վերաշարման, բուտաբեռոնից ժապավենածև հիմքի պատրաստման, բեռոնե աստիճանների և հարթակների երեսապատման, ինչպես նաև կավե ջրատար խողովակների ցուցադրության նպատակով ապակու տակ հատուկ կոնստրուկցիաների իրականացման աշխատանքներ:</p>
3	<p>Նախատեսվող աշխատանքների որակական պահանջները</p>	<p>Աշխատանքներն իրականացնել պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ ունեցող կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանքներ իրականացրած մասնագետների (ճարտարապետ կամ ճարտարագետ-շինարար, որմնադիր վարպետ) միջոցով: Աշխատանքներն իրականացնել համապատասխան նախագծային լուծումներին: Քարերի մշակման, շարվածքի իրականացման աշխատանքները կատարել ավանդական եղանակներով: Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոններն ու հուշարձանի անխաթարությունն ապահովող պահանջները:</p>

4	Վերականգնման աշխատանքների մեթոդիկան և նյութաբանական պահանջները	Վերականգնման և ամրակայման աշխատանքներն իրականացնել կառույցի քարատեսակին որակական հատկանիշերով մոտ քարով և բարդ շաղախով՝ նախկինում օգտագործված շաղախին մոտ բաղադրությամբ:
5	Այլ պահանջներ	Աշխատանքների կատարման ընթացքում նոր հայտնաբերված նյութերի ու փաստերի մասին, ինչը կարող է թերել նախագծային լուծումների կամ վերականգնողական աշխատանքների ծավալների փոփոխության, անմիջապես տեղյակ պահել Պատվիրատուին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ,
 Հասցեն՝ 0010, ք. Երևան, Կառավարական շենք N 3,
 հեռ.՝ 58-51-96, 58-51-78
 ՀՎՀՀ 02597322, Ի/հ 900011001493
 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
 գործառնական վարչությունում



[Signature]
 Բ. Խերանյան
 (Վերականգնողական)

ԿԱՊԱՍԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
 Հասցեն՝ ք. Արուսյան, Բարեկամության 2,
 հեռ.՝ (0222) 2-54-44,
 էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
 ՀՀ 03503627,
 ՀՀ 088121476
 «Արուսյան» մասնաճյուղ:



[Signature]
 Դ. Նազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԼՈՒՅԱԳԻՐ

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի Ար.Հովհաննես Եկեղեցու 2015 թ. վերականգնման և տարածքի բարեկարգման

5

1	Կառուցյի (հուշարձանի) բնութագիրը և ներկա վիճակի նկարագրությունը	<p>Ար Հովհաննես Եկեղեցին կառուցվել է 1832 թ., գտնվում է գյուղի, հարավային մասում: Եկեղեցին եռանավ բազիլիկ շինություն է, որի միջին նավն արևելքում վերջավորվում է կիսաշրջան խորանով, իսկ եզրային նավերը՝ ավանդատներով: Կառույցը բաղկացած է սրահից, նախաբեմից և 1 մ բարձրությամբ բեմից: Հատակը սալարկված է, պատերը գաջով սվաղված են: Խորանի առաստաղի վրա և կամարակապերի որոշ հատվածներում նկատվում են սրբապատկերներ: Պատերի մեջ ագուցված են միջնադարյան քանդակազարդ խաչքարեր և խաչքարերի բեկորներ: Եկեղեցին ունի երկու մուտք: Ծածկը երկթեք է, որի կենտրոնում ոչ մեծ քառանիստ սրածայր վեղարով գմբեթն է: Հյուսիսային մուտքին կից կառուցվել է զանգակատուն: Հուշարձանը 19-րդ դ. քնորոշ եռանավ բազիլիկ տիպի կառույցներից է և հետաքրքիր որպես երկու առանձին միավորների (եկեղեցի, զանգակատուն) ամբողջացման լուծումներով: Կառույցն ունի վտանգավոր ճաքեր, շերտավորումներ, դեֆորմացիաներ, քայքայվածություններ: Խախտված է ծածկերի ջրամեկուսացումը:</p> <p>2013 թ-վականին իրականացվել են Ար Հովհաննես Եկեղեցու արևելյան հարթ երեսապատի, մույթերի, որմնամույթերի, քիվերի, թաղի և ծածկասալերի հատվածային քանդման-վերաշարման, ամրակայման և նոր տաշ ու շարի աշխատանքներ:</p> <p>2014 թ-վականին իրականացվել են պատերի, մույթերի, որմնամույթերի, քիվերի, թաղերի, ծածկասալերի, սալահատակի, պարսպապատերի մասնակի՝ քանդման-վերաշարման, ամրակայման և նոր տաշ ու շարի, ներքին տարրերի նորոգման և հարդարման աշխատանքները:</p>
2	Ձեռքբերվող աշխատանքների համառոտ նկարագրությունը	<p>Նախատեսվում է բացել հողով ծածկված պատերը և հիմքը, փոշեզրկել, լվանալ պատերի և մույթերի անցքերի դատարկությունները, հատուկ բաղադրակազմի շաղախով ներարկել, շաղափել և ամրացնել պատերն ու որմնասյուները, վերաշարել հարթ ծածկասալերը սրբատաշ տուֆ քարից, կատարել դրանց նոր տաշ ու շարի և լիցքի աշխատանքներ:</p>
3	Նախատեսվող աշխատանքների որակական պահանջները	<p>Աշխատանքներն իրականացնել պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ ունեցող կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանքներ իրականացրած մասնագետների (ճարտարապետ կամ ճարտարագետ-շինարար, որմնադիր վարպետ) միջոցով: Աշխատանքներն իրականացնել համապատասխան նախագծային լուծումներին: Քարերի մշակման, շարվածքի իրականացման աշխատանքները կատարել ավանդական եղանակներով: Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոններն ու հուշարձանի անխաթարությունն ապահովող պահանջները:</p>
4	Վերականգնման աշխատանքների մեթոդիկան և նյութաբանական պահանջները	<p>Վերականգնման և ամրակայման աշխատանքներն իրականացնել կառուցյի քարատեսակին որակական հատկանիշներով մոտ քարով և բարդ շաղախով՝ նախկինում օգտագործված շաղախին մոտ բաղադրությամբ:</p>

« 01 » հունվարի 2015 թ.

կնքված աշխատանքների կադրման
թիվ <<<< ՄԼ ՄՍԻԳ-ԲԸԱՇՁԲ-15/48-2 >> գնման պայմանագրի

Չափաքան N 8

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ


ՀՀ Արարատի մարզի Վերին Դիլին հնավայրի ճեմուղիների, գլխավոր հատակագծի, մուտքային
հատվածների կազմակերպման և հուշարձանապատկան բեկորների ցուցադրության աշխատանքների

N ը/Կ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	Ա. Քաղաքատեղի				
2	Հողի շերտի կտրում ձեռքի գործիքներով հնագետի ներկայությամբ 2-րդ կարգի գրունտում	խմ	107.5	5 000,0	537 500,0
3	Գրունտի տոփանում խճով	100 քմ	6.49	50 000,0	324 500,0
4	Ավազից նախապատրաստական շերտ տոփանում 7 սմ հաստությամբ	խմ	45.44	6 400,0	290 816,0
5	Հողի հետիցք տոփանումով	խմ	3.5	20 000,0	70 000,0
6	Քետոնե սալիկների շար 70x70x7սմ հաստությամբ 3 սմ արանցով	100 քմ	6.49	1 790 000,0	11 617 100,0
7	Քետոնե սալիկների կտրում	գծմ	25.6	1 000,0	25 600,0
8	Երկաթ/քետոնե սալերի լրացուցիչ տեղավորում մոտավորապես 120 մ հեռավորության վրա	տն	102.24	3 000,0	306 720,0
	Բ. Թանգարանային մաս				
1	Գոյություն ունեցող քետոնե սալերի քանդում հեռացում Թանգարանի ներքևի հարթակում հողի քանդում	քմ	52.6	1 000,0	52 600,0
2	հեռացում ձեռքի գործիքներով 2-րդ կարգի գրունտում հնագետի ներկայությամբ	խմ	15.5	2 300,0	35 650,0
3	Քետոնի նախապատրաստական շերտ միջինը 10 սմ հաստությամբ	խմ	16.0	50 300,0	804 800,0
4	Տննետ ավազե հարթեցնող շերտ 4 սմ հարթության սալահատակի և աստիճանահարթակների տակ	քմ	266.1	2 600,0	691 860,0
5	Քաղաղի սալիկներով սալահատակի իրականացում 3 սմ հաստ.	քմ	244.1	19 600,0	4 784 360,0
6	3 սմ հաստությամբ քաղաղի սալերից աստիճանների իրկանացում	քմ	22.0	22 260,0	489 720,0
7	Ազրեստի կիսախողովակի տեղադրում փ28 սմ տրամագծով	գծմ	31.6	4 300,0	135 880,0
8	Նոպն խողովակի կտրում երկու կողմից	գծմ	31.6	2 100,0	66 360,0
9	Ազրեստի կիսախողովակի տակ քետոնի նախապատրաստական շերտ միջինը 15 սմ հաստ.	խմ	3.2	50 500,0	161 600,0
10	Քոստաքետոնից հենապատի պաշտաստում B12.5 /գոյություն ունեցողների վրա/	խմ	18.9	45 060,0	851 634,0
11	Հենապատի երեսապատում քաղաղե սալիկներով 3 սմ հաստ.	քմ	100.1	27 300,0	2 732 730,0
12	Բեկորների ցուցադրության համար հենապատերի վրա 7 սմ հաստությամբ քաղաղի վրադիրների նոր տաշ ու շար 80 միջ 100 սմ լայնությամբ	քմ	53.5	71 830,0	3 842 905,0
13	Հենապատի վրա 7 սմ հաստությամբ քաղաղե	քմ	4.22	84 300,0	355 746,0

	վրադիրների նոր տաշ ու շար /34 սմ լայնությամբ/				
14	Թանգարանի դիմաց աստիճանների տակ բուսաբետոնի լիցք	խմ	1.5	41 880,0	62 820,0
Գ. Միջնաբերդի մուտք					
1	Հարթ երեսապատի քանդում վերաշարում սրբատաշ տուֆից	քմ	10.9	28 230,0	307 707,0
2	Նույնի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	քմ	11.8	104 320,0	1 230 976,0
